

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 43/5

22-ը փետրվարի 2020 թվականի

Հոգեբանություն (031301.01.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հոգեբանություն (031301.01.6)՝ կրթական ծրագիրը համաձայն հավելվածի:

ԵՂԶ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

**«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍՆԱԳԻՐ**

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	«Հոգեբանություն», 031301.01.6
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Հոգեբանության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2019-2020
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները
Բակալավրի առկա ուսուցման ծրագրի ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված համապատասխան կարգի ¹ : Ընդունելության քննությունները. Հայոց լեզու և գրականություն (գրավոր), Օտար լեզու (գրավոր), Կենսաբանություն (գրավոր) ² :

9. Ծրագրի նպատակները
Ծրագիրը նպատակ ունի. - Տրամադրելու բազմակողմանի գիտելիքներ հոգեբանության հիմնարար ոլորտների՝ ընդհանուր հոգեբանության, սոցիալական, զարգացման, կլինիկական հոգեբանության վերաբերյալ, տալու խոր տեսական հենք հոգեկանի կառուցվածքը, զարգացումը, ախտաբանական դրսևորումները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու համար: - Զարգացնելու ուսանողների մասնագիտական կարողությունները՝ ուսուցանելով հոգեախտորոշման, հոգեբանական հետազոտության իրականացման, հոգեբանական խորհրդատվության սկզբունքներն ու մեթոդները: - Զարգացնելու ուսանողների ընդհանրական մտավոր կարողությունները՝ վերլուծություն, համեմատություն և համադրում, քննադատական մտածողությունը, տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հայթայթելու, մեկնաբանելու և ներկայացնելու կարողությունը: - զարգացնելու ուսանողների աշխատանքային գործունակությունը՝ իրենց ուսումնառության ոլորտին և մակարդակին համապատասխան, - օգնելու նրանց կիրառելու մասնագիտական կարողությունները արդի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. - Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: - Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման

¹ «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ», ՀՀ կառավարության որոշում (26 ապրիլի 2012 թվականի N 597 –Ն):

² Կենսաբանություն առարկայից ընդունելության քննությունը պարտադիր է անվճար տեղերի դիմորդների համար, իսկ վճարովի տեղերի դիմորդների համար փոխանցվում է դպրոցի «Կենսաբանություն» առարկայի ամփոփիչ գնահատականը

օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները: 3. Սահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, մատնանշելու դրանց կիրառման ուղիները, հնարավորությունները և սահմանափակումները: 4. Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում: 5. Թվարկելու հոգեբանի մասնագիտական գործունեության հիմնական էթիկական սկզբունքները, մատնանշելու դրանց նշանակությունը և պահպանման անհրաժեշտությունը: 6. Ճանաչելու հոգեկան խանգարումների յուրաքանչյուր տեսակի ախտանիշները և դրանց դասակարգման համակարգերը /DSM-IV- R, ICD-10/:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:
2. Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:
3. Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:
4. Համադրելու հոգեբանական աշխատանքի տարբեր մոտեցումները, գտնելու մասնագիտական լուծումներ և ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում:
5. Կազմակերպելու իր աշխատանքային և/կամ ուսումնական գործունեությունը ստացած տեսագործական գիտելիքներին համապատասխան:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Կիրառելու ժամանակակից ՏՀՏ-ները գիտելիքի փոխանցման գործընթացը և մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու և դյուրացնելու համար:
3. Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:
4. Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,
5. Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կից ներկայացված է:

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

- Հետազոտական աշխատանք
- Լուսապատկերաշար
- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
- Թղթապանակ
- Հետազոտական աշխատանք/մասնագիտական գրականության վերաբերյալ/

- Ինքնագնահատում, փոխգնահատում
- Ռեֆերատ
- Էսսե
- Խմբային ներկայացում
- Տարաբնույթ առաջադրանքներ
- Չեկուցումներ
- Ուսումնական նախագծեր
- Գրավոր կարճ հաղորդագրություններ
- Ստուգարքներ
- Քննություններ
- Ավարտական աշխատանքի պաշտպանություն:

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Հոգեբանություն» կրթական ծրագրի շրջանավարտները ինքնուրույն մասնագիտական գործունեության հնարավորություն կունենան հոգեախտորոշման, հոգեբանական աջակցության, առողջապահական, մասնագիտական գործունեության, սոցիալական խնամքի և կրթական ոլորտներում:

Շրջանավարտները կարող են աշխատել խնամքի և պաշտպանության ցերեկային կենտրոններում որպես սոցիալական խնամք և հոգեբանական աջակցություն իրականացնող մասնագետներ, հիմնական և ավագ դպրոցներում որպես հոգեախտորոշիչ, զարգացնող, հոգեշտկող և աջակցող հոգեբան-մասնագետներ, կազմակերպություններում որպես անձնակազմի հետ աշխատող հոգեբաններ, փորձառու հոգեբանի ղեկավարությամբ (սուպերվիզիայի ներքո) հոգեբանական ծառայության կենտրոններում որպես հոգեբանական ախտորոշում և աջակցություն իրականացնող մասնագետներ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրատուրայում, հետագայում՝ ասպիրանտուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Սույն ծրագրով ուսումնառության օժանդակության համար առկա են բազմազան ռեսուրսներ՝ դասախոսների անձնական միջոցներով և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ձեռքբերված ժամանակակից մասնագիտական գրականություն (հայերեն, ռուսերեն և անգլերեն), էլեկտրոնային գրադարան, քանակական հետազոտությունների համար նախատեսված համակարգչային ծրագրեր, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասախոսություններ իրականացնելու հարմարեցված լսարաններ, հոգեբանական գործնական աշխատանքների համար նախատեսված և կահավորված թրեյնինգների սենյակ:

Ծրագրի իրականացման համար գիտահետազոտական և ուսումնական բազա են հանդիսանում ֆակուլտետում գործող 3 հետազոտական լաբորատորիաները և Կիրառական հոգեբանության կենտրոնը: Ուսանողները մասնակցում են լաբորատորիաների աշխատանքներին, ինչպես նաև միջազգային համագործակցության շրջանակներում լաբորատորիաների կողմից իրականացվող միջմշակութային ուսումնասիրություններին:

Ֆակուլտետի դասախոսական անձնակազմը կիրառում է դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդներ և միջոցներ՝ բանավեճեր, փոքր խմբերով աշխատանքներ, հետազոտական առաջադրանքներ, որոնք նպաստում են ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Տվյալ կրթական ծրագրի մշակման հիմքում ընկած են բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական շրջանակը («Դուբլինյան նկարագրիչները»), ՀՀ բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները, ՀՀ կրթության և գիտության նախարարի 22.12.2016թ.-ի թիվ 1326-Ա հրամանով հաստատված «Հոգեբանություն մասնագիտության» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերը, ինչպես նաև մի շարք միջազգային ծրագրային կողմնորոշիչներ և չափորոշիչներ:

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ
Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ ԻՄ դասընթացների տեղեկագրքում:

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1	Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:	Բ1	կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:
Ա2	Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:	Բ2	Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:
Ա3	Սահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, մատնանշելու դրանց կիրառման ուղիները, հնարավորությունները և ահմանափակումները:	Բ3	Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:
Ա4	Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում:	Բ4	Համադրելու հոգեբանական աշխատանքի տարբեր մոտեցումները, գտնելու մասնագիտական լուծումներ և ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում:
Ա5	Թվարկելու հոգեբանի մասնագիտական գործունեության հիմնական էթիկական սկզբունքները, մատնանշելու դրանց նշանակությունը և պահպանման անհրաժեշտությունը:	Բ5	Կազմակերպելու իր աշխատանքային և/կամ ուսումնական գործունեությունը ստացած տեսագործական գիտելիքներին համապատասխան:
Ա6	Ճանաչելու հոգեկան խանգարումների յուրաքանչյուր տեսակի ախտանիշները և դրանց դասակարգման համակարգերը /DSM-IV-R, ICD-10/		
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1	Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:	Գ4	Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

Գ2	Կիրառելու ժամանակակից S2S -ները գիտելիքի փոխանցման գործընթացը և մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու և դյուրացնելու համար:	Գ5	Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը,
Գ3	Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:		

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԶԱՐՏԵԶԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ																		
Պարտադիր դասընթացներ																		
Ֆիզդաստիարակություն	0001/B01,B07											X						
Ֆիզդաստիարակություն	0001/B13,B16											X						
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B02														X	X		
Ռուսերեն-1	0305/B03												X			X		
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	0104/B04												X	X				
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/B05															X	X	
Հայոց պատմության հիմնահարցեր-1	0304/B06														X		X	
Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	0001/B08												X				X	
Ռուսերեն-2	0305/ B09												X			X		
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	0302/B10															X	X	
Հայոց պատմության հիմնահարցեր-2	0304/B11														X		X	
Փիլիսոփայության հիմունքներ	0304/B12												X			X		

Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	0104/B14														X		X	
Իրավունքի հիմունքներ	0304/B15													X			X	
Կամընտրական դասընթացներ																		
Անգլերեն-1-4 կրեդիտ	0305/ B17													X			X	
Ֆրանսերեն-1-4 կրեդիտ	0305/ B17													X			X	
Կամընտրական դասընթացներ																		
Անգլերեն-2-4 կրեդիտ	0305/ B18													X			X	
Ֆրանսերեն-2-4 կրեդիտ	0305/ B18													X			X	
Ընդհանուր կրթական կառուցամաս /Կամընտրական 4/																		
Բարոյագիտության հիմունքներ-2 կրեդիտ	0303/B19															X	X	
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր-2 կրեդիտ	0105/B19															X		X
Գործարարության հիմունքներ-2 կրեդիտ	0201/ B19																X	X
Կրոնագիտության հիմունքներ-2 կրեդիտ	0304/ B19															X		X
Մշակութաբանության հիմունքներ-2 կրեդիտ	0202/ B19															X		X
Սոցիոլոգիայի հիմունքներ-2 կրեդիտ	0303/ B19													X		X	X	
Տնտեսագիտության հիմունքներ-2 կրեդիտ	0201/ B19															X		X
Տրամաբանության հիմունքներ-2 կրեդիտ	0304/ B19																X	
Քաղաքագիտության հիմունքներ-2 կրեդիտ	0304/ B19															X		X

Մասնագիտական կառուցամաս																		
Պարտադիր դասընթացներ																		
ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա	0303/B20		X		X					X			X			X	X	
Մասնագիտության ներածություն	0303/B21		X		X						X		X					
Իմացական գործընթացների հոգեբանություն և պրակտիկում-1	0303/B22	X	X	X				X	X						X	X	X	
Անձնային աճի պրակտիկում	0303/B23					X					X	X						X
Իմացական գործընթացների հոգեբանություն և պրակտիկում-2	0303/B24	X	X		X			X	X						X			
Հոգեբանության պատմություն	0303/B25	X			X					X			X					X
Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն	0303/B26		X							X					X	X		
Հոգեֆիզիոլոգիա	0303/B27	X	X					X	X	X			X			X	X	
Անձի հոգեբանություն	0303/B28	X	X						X						X			
Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում	0303/B29	X			X				X							X		
Սոցիալական հոգեբանություն	0303/B30	X	X							X					X			
Կրթության հոգեբանություն	0303/B31		X		X				X	X								X
Հուզական մային ոլորտի հոգեբանություն և պրակտիկում	0303/B32	X	X					X		X			X		X	X		
Անձի տեսություններ	0303/B33	X	X							X					X	X		
Հոգեախտորոշում	0303/B34			X	X			X	X					X		X		
Էթնոհոգեբանություն	0303/B35	X	X							X					X			

Ընտանիքի հոգեբանություն	0303/B36		X						X					X	X		
Չարգացման հոգեբանություն	0303/B37	X	X		X					X					X	X	
Փորձարարական հոգեբանություն	0303/B38	X		X		X		X	X						X	X	
Կոնֆլիկտի հոգեբանություն	0303/B39				X					X		X	X				
Ռազմական հոգեբանություն	0303/B40				X					X		X	X				
Հոգեբանական խորհրդատվություն և պրակտիկում	0303/B41				X	X				X	X		X				
Բժշկական հոգեբանություն	0303/B42	X					X			X				X			
Ստեղծագործական հոգեբանություն	0303/B43				X	X				X					X		
Ինքնակարգավորման հիմունքներ	0303/B44	X	X					X					X				
Արտակարգ իրավիճակների հոգեբանություն	0303/B45		X		X					X	X		X				X
Հոգեթերապիա-1	0303/B46	X	X									X					
Հոգեսոմատիկա	0303/B47						X		X		X						X
Կառավարման հոգեբանություն	0303/B48		X		X					X	X		X				X
Իրավաբանական հոգեբանություն և փորձաքննություն	0303/B49		X		X				X						X		
Հոգեգենետիկայի հիմունքներ	0303/B50		X		X			X					X				
Հատուկ հոգեբանություն	0303/B51		X		X				X						X		
Հոգեախտաբանություն	0303/B52		X		X				X						X		
Մաթվիճակագրական մեթոդները հոգեբանության մեջ	0303/B53			X	X						X	X	X	X		X	X
Հոգեթերապիա-2	0303/B54			X	X						X	X	X	X		X	

Կամընտրական դասընթացներ																		
Առողջության հոգեբանություն-3կրեդիտ	0303/B55	X	X						X									
Սեռի հոգեբանություն-3կրեդիտ	0303/B55		X				X			X								X
Կամընտրական դասընթացներ																		
Ներազդման հոգեբանություն-3կրեդիտ	0303/B56	X			X					X						X		
Քաղաքական հոգեբանություն-3կրեդիտ	0303/B56				X					X	X							X
Կամընտրական դասընթացներ																		
Այցելուակենտրոն թերապիա-2 կրեդիտ	0303/B57				X	X				X						X		
Արտթերապիա-2 կրեդիտ	0303/B57				X	X				X						X		
Կամընտրական դասընթացներ																		
Իմիջի հոգեբանություն-4 կրեդիտ	0303/B58	X			X						X	X						X
Մանկական հոգեախտորոշում և հոգեթերապիա-4կրեդիտ	0303/B58			X				X	X							X		
Կրթական այլ մոդուլներ																		
Կուրսային աշխատանք - 1	0303/B59	X						X			X					X		X
Մասնագիտական պրակտիկա-1	0303/B60	X		X		X					X					X		X
Կուրսային աշխատանք -2	0303/B61	X		X				X	X		X					X		X
Մասնագիտական պրակտիկա-2	0303/B62			X		X		X	X		X					X		X
Ավարտական աշխատանք	0303/B63	X		X				X	X		X					X		X
Մասնագիտական պրակտիկա-3	0303/B64			X		X		X	X		X					X		X

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Դերժ. ուստար	Կրթական մոդուլի անվանումը	Կրեդիտներ	Ուումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ																Ձևահատմուն ձևը
			ընդամենը	դասախ.	գործն. /սեմ.	լաբ. աշխ.	ինքն. աշխ.	1		2		3		4		5		6		7		8		
								կրդ.	լս.ժ	կրդ.	լս.ժ	կրդ.	լս.ժ	կրդ.	լս.ժ	կրդ.	լս.ժ	կրդ.	լս.ժ	կրդ.	լս.ժ	կրդ.	լս.ժ	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		44	1440	225	555	0	660	16	18	16	18	8	10	4	6									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ)		40	1320	165	555	0	600	16	18	16	18	8	10	0	2									
	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	60	30			30	2	2															Ստ.
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	60		30		30	2	2															Ստ.
	Ռուսերեն - 1	4	120		60		60	4	4															Ստ.
	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	60		30		30	2	2															Ստ.
	Տեղեկատվական տեխնոլոգիա- ների կիրառման հմտություններ	2	60		30		30	2	2															Ստ.
	Հայոց պատմության հիմնահարցեր - 2	2	60	30			30			2	2													Ստ.
	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	60		30		30			2	2													Ստ.
	Ռուսաց լեզու-2	4	120		60		60			4	4													Ստ.

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4	120	30	30		60			4	4												Ստ.
Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	2	60	15	15		30					2	2										Ստ.
Իրավունքի հիմունքներ	2	60	30			30					2	2										Ստ.
Փիլիսոփայության հիմունքներ	4	120	30	30		60					4	4										Ստ.
Ֆիզդաստիարակություն - 4	0	120		120				2		2		2		2								Ստ.
Կամընտրական առարկաներ	4	120		60		60	4	4														Ստ.
Անգլերեն - 1																						
Ֆրանսերեն - 1																						
Կամընտրական առարկաներ	4	120		60		60			4	4												Ստ.
Անգլերեն – 2																						
Ֆրանսերեն - 2																						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ(ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ)	4	120	60			60							4	4								Ստ.
Բարոյագիտության հիմունքներ	2		30			30																
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2		30			30																
Գործարարության հիմունքներ	2		30			30																
Կրոնագիտության հիմունքներ	2		30			30																

Մշակութաբանության հիմունքներ		2		30			30																	
Սոցիոլոգիայի հիմունքներ		2		30			30																	
Տնտեսագիտություն		2		30			30																	
Տրամաբանության հիմունքներ		2		30			30																	
Քաղաքագիտության հիմունքներ		2		30			30																	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		162	4860	1425	795	45	2595	15	14	15	14	24	22	26	25	26	24	26	24	30	28			
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ)		150	4500	1335	750	45	2370	15	14	15	14	24	22	26	25	20	20	24	22	26	25			
	ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա	5	150	45	15		90	5	4															Եզ.գն.
	Մասնագիտության ներածություն	2	60	30			30	2	2															Առ.ընթ.գն.
	Իմացական գործընթացների հոգեբանություն և պրակտիկում-1	6	180	60	30		90	6	6															Եզ.գն.
	Անձնային աճի պրակտիկում	2	60		30		30	2	2															Առ.Եզ.գն.
	Իմացական գործընթացների հոգեբանություն և պրակտիկում-2	6	180	60	30		90			6	6													Եզ.գն.
	Հոգեբանության պատմություն	5	150	45	15		90			5	4													Եզ.գն.
	Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն	4	120	45	15		60			4	4													Եզ.գն.
	Հոգեֆիզիոլոգիա	4	120	45	15		60					4	4											Եզ.գն.
	Անձի հոգեբանություն	4	120	30	30		60					4	4											Առ.Եզ.գն.

Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում	6	180	30	45		105					6	5										Եզ.գն.
Սոցիալական հոգեբանություն	6	180	60	30		90					6	6										Եզ.գն.
Կրթության հոգեբանություն	4	120	30	15		75					4	3										Առ.Եզ.գն.
Հուզականային ոլորտի հոգեբանություն և պրակտիկում	6	180	45	30	15	90							6	6								Եզ.գն.
Անձի տեսություններ	6	180	60	15		105							6	5								Եզ.գն.
Հոգեախտորոշում	6	180	30	30	30	90							6	6								Եզ.գն.
Էթնոհոգեբանություն	4	120	30	30		60							4	4								Առ.Եզ.գն.
Ընտանիքի հոգեբանություն	4	120	30	30		60							4	4								Առ.Եզ.գն.
Չարագցման հոգեբանություն	5	150	60	15		75									5	5						Եզ.գն.
Փորձարարական հոգեբանություն	4	120	30	30		60									4	4						Եզ.գն.
Կոնֆլիկտի հոգեբանություն	4	120	45	15		60									4	4						Առ.Եզ.գն.
Ռազմական հոգեբանություն	3	90	30	15		45									3	3						Առ.Եզ.գն.
Հոգեբանական խորհրդատվություն և պրակտիկում	4	120	30	30		60									4	4						Եզ.գն.
Բժշկական հոգեբանություն	6	180	60	30		90											6	6				Եզ.գն.
Ստեղծագործության հոգեբանություն	4	120	30	30		60											4	4				Առ.Եզ.գն.
Ինքնակարգավորման հիմունքներ	4	120	30	30		60											4	4				Առ.Եզ.գն.
Արտակարգ իրավիճակների	2	60	30			30											2	2				Առ.ընթ.գն.

հոգեբանություն																							
Հոգեթերապիա-1	5	150	30	30		90											5	4					Եզ.գն.
Հոգեսոմատիկա	3	90	30			60											3	2					Առ.եզ.գն
Կառավարման հոգեբանություն	6	180	60	30		90													6	6			Եզ.գն.
Իրավաբանական հոգեբանություն և փորձաքննություն	6	180	60	30		90													6	6			Եզ.գն.
Հոգեգենետիկայի հիմունքներ	2	60	30			30													2	2			Առ.ընթ.գն
Հատուկ հոգեբանություն	2	60	30			30													2	2			Առ.եզ.գն
Հոգեախտաբանություն	2	60	30			30													2	2			Առ.եզ.գն
Մաթ. վիճակագրական մեթոդները հոգեբանության մեջ	3	90	15	30		45													3	3			Առ.ընթ.գն
Հոգեթերապիա-2	5	150	30	30		90													5	4			Եզ.գն.
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ)	12	360	90	45	0	225									6	4	2	2	4	3			
Կամընտրական առարկաներ	3	90	30			60									3	2							Առ.ընթ.գն
Սեռի հոգեբանություն																							
Առողջության հոգեբանություն																							
Կամընտրական առարկաներ	3	90	15	15		60									3	2							Առ.եզ.գն
Ներազդման հոգեբանություն																							
Քաղաքական հոգեբանություն																							

Կամընտրական առարկաներ		2	60	15	15		30										2	2						Առ. ընթ. գն
	Արտթերապիա																							
	Այցելուական տրոն թերապիա																							
Կամընտրական առարկաներ		4	120	30	15		75												4	3				Առ. եզ. գն
	Իմիջի հոգեբանություն																							
	Մանկական հոգեախտորոշում և հոգեթերապիա																							
ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈՂՈՒՆԵՐ		34	1020				1020								4		4					26		
	Մասնագիտական պրակտիկա-1	2	60				60								2									Ստ.
	Կուրսային աշխատանք – 1	2	60				60								2									Առ. ընթ. գն
	Կուրսային աշխատանք – 2	2	60				60										2							Առ. ընթ. գն
	Մասնագիտական պրակտիկա-2	2	60				60										2							Ստ.
	Մասնագիտական պրակտիկա-3	6	180				180															6		Ստ.
	Ավարտական աշխատանք	20	600				600															20		Առ. ընթ. գն
ԸՆԴՀԱՄԵՆԸ`		240	7320	1650	1350	45	4275	31	32	31	32	32	30	31	30	24	30	24	30	28	26	0		240

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐԻՉՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (Պարտադիր դասընթացներ)

0302/B05	Հայոց լեզու 3 խոսքի մշակույթ-1	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/0/30	
1-ին՝ աշնանային	Ստուգաբք	
Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք: Դասընթացի խնդիրները. Ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները, ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - Ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը: - Ձևավորելու բանավոր խոսքի և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն): - Սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում: բ. գործնական մասնագիտական կարողություններ - Կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք: - Գործառնելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, - Աշխատելու թիմում:		
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները. Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:		

Կիրառվում են դասավանդման 7 ուսումնառության հետքայլ ձխերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. մտազրոհ 4. վերլուծական մեթոդ 5. խոսքային կամ բանավոր մեթոդ 6. գրավոր մեթոդ 7. բացատրական մեթոդ:
Գնահատման մեթոդները 7 չափանիշներն են. Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:
Դասընթացը բաղկացած է հետքայլ հիմնական թեմաներից. Թեմա 1. Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ: Թեմա 2. Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: Թեմա 3. Բառային մակարդակ: Թեմա 4. Քերականական մակարդակ: Ձևաբանություն: Թեմա 5. Շարահյուսություն:
Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014: 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ, Եր, 2015: 3. Ասատրյան Մ. Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր, 2002: 4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003: 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:

0302/B10	Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/0/30	
2-րդ՝ գարնանային	ստուգարք	
Դասընթացին պատասկն է՝ հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, գրագետ գործառմամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու համար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնելու սովորական գործընթացներում:		
Դասընթացի խնդիրները. 1. Բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ <i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i>		

1. Ներկայացնելու խոսքի արժանիքները: 2. Կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Լուսաբանելու գործառական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կառուցելու պատկերավոր և գրագետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, դրսևորելու խոսքային բարձր էթիկետ:		
Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները. Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:		
Կիրառվում են դասավանդման 7 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները. 1. Քննարկում /բանավեճ: 2. Համագործակցային աշխատանք: 3. Մտագրոհ: 4. Վերլուծականմեթոդ: 5. Խոսքային կամ բանավոր մեթոդ: 6. Գրավոր մեթոդ: 7. Բացատրական մեթոդ:		
Գնահատման մեթոդները 7 չափանիշներն են. Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:		
Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական թեմաներից. Թեմա1. Խոսքի արժանիքները: Թեմա 2. Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: Թեմա 3. Խոսքի գործառական տարբերակներ /գիտական, պաշտոնական, խոսակցական/: Թեմա 4. Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:		
Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014: 22 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ, Եր., 2015: 3. Ասատրյան Մ. Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր, 2002: 4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003: Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:		

0304/B06	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2 ECTS կրեդիտ
2 Ժամ/շաբ.	30/0/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածի պատմությունը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:
2. Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կորոշություն:
3. Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը:
2. Նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները:
3. Ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանելու Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:
2. Արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում:
3. Արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

23

1. Տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը և հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում:
2. Բանավիճելու:

Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները.

Գ3. քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները.

1. դասախոսություն 2. ռեֆերատ 4. անհատական և խմբային առաջադրանքներ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաթիվ Նախապես տրված հարցաշարի շրջակա նույն անցկացվում է բանավոր հարցում:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: Թեմա 2. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա. 9-6-րդ դդ./: Երվանդունիների թագավորությունը: Թեմա 3. Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: Թեմա 4. Արշակունիների թագավորությունը: Թեմա 5. Հայաստանը վաղ միջնադարում: Թեմա 6. Հայաստանը զարգացած միջնադարում: Թեմա 7. Հայաստանը ուշ միջնադարում:
Հիմնական գրականության ցանկ. 1. Հայոց պատմություն, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Երևան, 2009:

0304/B11	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
2-րդ կիսամյակ	Ստուգաթիվ	
Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածի պատմությունը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց ²⁴ վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում:		
<u>Դասընթացի խնդիրները.</u> 1. Ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին: 2. Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու		

կարողություն: 3. Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:
Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը: 2. Նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը: 2. Արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Տարբերակելու և գնահատելու մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:
Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները. Գ3. քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ: Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:
Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. ռեֆերատ 3. անհատական և խմբային առաջադրանքներ:
Գնահատման մեթոդները 3 չափանիշներն են. Ստուգաբք. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:
Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: Թեմա 2. Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: Թեմա 3. Հայկական հարցի միջազգայնացումը: Թեմա 4. Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: Թեմա 5. Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Թեմա 6. Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: Թեմա 7. Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: Թեմա 8. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: Թեմա 9. Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: Թեմա 10. Հայաստանի Երրորդ

Հանրապետությունը: Թեմա 11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:
Հիմնական գրականության ցանկ. 1. Հայոց պատմություն, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Երևան, 2009:

1. 0305/ B03	2. Ռուսերեն- 1	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգաթղթ	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից:		
Դասընթացի խնդիրներն են. 1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա: 2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք: 3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները: 4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը: 2. Ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար: 3. Կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին): 2. Ընկալելու և սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:		
10. Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները.		26
Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
11. Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. Էվրիստիկական մեթոդ 4. մտազրոհ		

5. ինդուկտիվ մեթոդ 6. դեդուկտիվ մեթոդ 7. վերլուծական մեթոդ 8. խոսքային կամ բանավոր մեթոդ 9. գրավոր մեթոդ 10. բացատրական մեթոդ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են Ստուգաբլիթ անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Հնչյունաբանություն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական տիպերը: Բաժին 2. Բառագիտություն. բառիմաստ, մեկիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: Բաժին 3. Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: Բաժին 4. Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց բերականական կարգերը: Գոյական անուն, բերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, բերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, բերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, բերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, բերականական կարգերը, ուղղագրությունը:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности.

1. 0305/ B09	2. Ռուսերեն - 2	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	
6. 2-րդ կիսամյակ	7. ստուգաբլիթ	
8. Դասընթացի նպատակն է՝ ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը:		
Դասընթացի խնդիրներն են.		27
1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա: 2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք: 3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները: 4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը: 2. Կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով:		

3. Գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով:
2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները:
3. Վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ:
4. Թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը:
5. Չանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Գնահատելու, վերլուծելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:
2. Օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

10. Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները.

Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

11. Կիրառվում են դասավանդման 7 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. Էվրիստիկական մեթոդ
4. մտագրոհ
5. ինդուկտիվ մեթոդ
6. դեդուկտիվ մեթոդ
7. վերլուծական մեթոդ
8. խոսքային կամ բանավոր մեթոդ
9. գրավոր մեթոդ
10. բացատրական մեթոդ:

12. Գնահատման մեթոդները 7 չափանիշներն են.

Ստուգարքն անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

13. Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: **Բաժին 2.** Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասություն, նախադասության անդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: **Բաժին 3.** Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական

կառուցվածքները: **Բաժին 4.** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:

14. Հիմնական գրականության ցանկ

1. Русский язык. Под общ. ред. Л. М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004.
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

1. 0104/B04	2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3. 2 կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման մասին, զարգացնել համակարգիչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգիչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Դասընթացի խնդիրները.

1. Ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին:
2. Մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ռճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները:
3. Բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ:
4. Կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար:
5. Ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները:
2. Ընտրելու ռճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար:
3. Վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ:
4. Ուսանողը ունակ կլինի ընտրել և ներկայացնել Power Point համակարգի հնարավորությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները:
2. Կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով:
3. Էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ:
4. Կիրառելու Power Point ծրագիրը զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների ցուցադրման համար:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները.

Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ2. կիրառելու ժամանակակից S2S -ները գիտելիքի փոխանցման գործընթացը և մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու և դյուրացնելու համար:

Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները.

1. գործնական աշխատանք
2. փոքր խմբերում տարբեր հարցադրումներ և քննարկումներ,
3. լաբորատոր աշխատանքներ,
4. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր.

Գնահատման մեթոդները 3 չափանիշներն են.

Ստուգաթ.

Թեստը, առաջադրանքը, խնդիրը կամ ռեֆերատը. գնահատվում է «Բավարար», եթե կատարել է 50% և ավելի:

1. Ուսանողը շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները:
2. Ուսանողը հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը:
3. Ուսանողը տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեստերից:

Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը 3 աշխատանքի հիմնական սկզբունքները.

Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: ԷՀՄ-ի հիմնական հանգույցները. հիշասարք, պրոցեսոր, ներածման և արտածման սարքեր: ԷՀՄ-ի ծրագրային ապահովումը: Ֆայլ, ֆայլի անվանում. Ֆայլի ճանապարհ: Հիշողության չափման միավորները:

Թեմա 2. Microsoft Word փաստաթղթերի ստեղծում և ձևավորում.

Փաստաթղթերի ստեղծում և ձևավորում: Տառի բնութագրերը: WordArt-ի տեղադրում: Նրա հետ աշխատելու գործիքներ: Formatting պանելի գործիքները: Աշխատանք Tab-երի հետ: Պարագրաֆ, նրա բնութագրերը: Էջի պարամետրերի տեղադրում: Եզրագծերի և ֆոնի տեղադրում, տեքստերի խմբագրում (բլոկների պատճենում, տեղափոխում, տեղադրում): Փաստաթղթերի նախնական դիտարկում և տպում: Տեքստերի սխալների ուղղում, որոնում, փոխարինում: Էջի համարների տեղադրում: Drawing ռեժիմ: Աշխատանք Autoshapec-երի հետ: Աղյուսակների տեղադրում:

Թեմա 3. Microsoft Excel Էլեկտրոնային աղյուսակներ

Microsoft Excel Էլեկտրոնային աղյուսակային համակարգի պատուհանի կառուցվածքը: Բջիջներ: Տվյալների ներմուծում, խմբագրում, ֆորմատավորում: Բջջի հասցեների տիպերը: Ներմուծման ավտոմատացում: Տրամաբանական գործողություններ, ֆունկցիաներ: Տվյալների տեսակավորում Filter, Sort ռեժիմները:

Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ներկայացումների ստեղծում: Անիմացիաների և ոճերի հաղորդում սահիկներին: Ձայնային, լուսային ոճերի հաղորդում սահիկներին: Դիզայնի ձևավորում: Ավտոմատացնել սահիկների միջև անցումը: Ներկայացումն ինտեգրել այլ թվայնացված միջոցների հետ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ա.Հովակիմյան., Ս.Սարգսյան, Լ.Խաչոյան., Ն.Իսախրյան, Ա.Մանուկյան, Ն.Մկրտչյան. Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2012թ.:
2. Тихомиров А., Прокди А. К. Колосков П.В., Клендрова И.А. и др. Microsoft Office 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008.
3. Բ. Ջանփոլադյան, Քոմիյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքները, ՀԴՃՀ, Երևան, 2000թ.:

1. 0001/B08	2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները: 2. Ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին: 3. Մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները: 4. Ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը:		

5. Ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. զնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն:
2. Դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում:
3. Ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում:
4. Օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում:
2. Աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ:
3. Վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:

10. Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքը.

Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

11. Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. հարցադրումներ և քննարկումներ,
4. լաբորատոր աշխատանքներ,
5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր.

12. Գնահատման մեթոդները 3 չափանիշները

Դասընթացն ավարտվում է **ստուգաբով:** Ստուգաբովն անցկացվում է բանավոր հարցման միջոցով: Հարցերի 50%-ին պատասխանելու դեպքում ստուգաբով համարվում է հանձնված:

13. Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ: **Թեմա 1.** Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: **Թեմա 2.** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: **Բաժին 2. Քաղաքացիական պաշտպանություն: Թեմա 3.** Բնակչության գործողությունները ահաբեկությանների և նրանց սպառնալիքի³² ժամանակ: **Թեմա 4.** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և զնահատման մեթոդները: **Թեմա 5.** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: **Թեմա 6.** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: **Թեմա 7.** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: **Բաժին 3. ԱԻ-ում բնակչության առաջին բուժօգնություն: Թեմա 8.** Առաջին բուժօգնությունն ու միջբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 9.** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: **Թեմա 10.** Սուր հիվանդություններ և թունավորումներ: **Թեմա 11.** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 12.** Վնասվածքներ և սուր

վիրաբուժական հիվանդություններ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Մարկարյան Ռ.Վ., Ջանջուղազյան Ն.Ա., Օհանջանյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ա., Հարությունյան Վ.Ս., Բաղդասարյան Լ.Լ., Հասարթյան Ռ.Ց., Վարդանյան Ջ.Հ., «Քաղաքաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Երևանի համալս. հրատ., 2006, 238 էջ:
2. Հեղինակների կողմից, «Մինչքննական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարկ, Երևանի համալս. հրատ., 2007, 224 էջ:
3. Կ.Ա. Մանասյան, «Սիրտ-թոքային վերակենդանացման մինչքննական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., Երևանի համալս. հրատ., 2007, 44 էջ:
4. Մ.Խ.Ադամյան, «Փոխադրական անշարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., Երևանի համալս. հրատ., 2011, 36 էջ:
5. Ս.Ա.Մանուկյան, Գ.Հ.Ճաղարյան, «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալս. հրատ., 2017

1. 0105/B02	2. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 1-ին կիսամյակ	7. Մտուգարք	
Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախազգուշացնելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու Էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Սովորողներին նախապատրաստել աշխարհայացքի ինքնուրույն ընտրության: Դասընթացի խնդիրները. 1. Ուսանողների տալ հիմնարար գիտելիքներ՝ Էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, Էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի Էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, Էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, Էկոլոգիական ճգնաժամերի, Էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող Էկոլոգիական օրենսդրության մասին: 2. Ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, Էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու, ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակնություն անելու կարողությունները: 3. Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ: Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու Էկոլոգիայի հիմնական հասկացությունները, Էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները: 2. Նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները:		

3. Բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին: 2. Նախագգուշական միջոցառումներ ներկայացնելու՝ զերծ պահելու շրջակա միջավայրը Էկոլոգիական աղետներից: 3. Անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի Էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի Էկոլոգիան: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն: 2. Հետազոտություններ անելու՝ ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով: 3. Կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու համար, թե այս կամ այն գործոնը ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ Էկոհամակարգի վրա:
Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները. Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ. Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:
Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները. 1. Պասիվ դասախոսություն 2. Ակտիվ դասախոսություն ✓ <i>հարց ու պատասխան</i> ✓ <i>զրույց</i> 3.Ինտերակտիվ դասախոսություն ✓ <i>«Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում</i> ✓ <i>հարց ու պատասխան</i> ✓ <i>բանավեճ</i> ✓ <i>զրույց</i>
Գնահատման մեթոդները 34 և չափանիշներն են. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի զեկուցում: Այն ուսնողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:
Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, միխմուսի, Վիյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: Թեմա 2. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: Թեմա 3. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: Թեմա 4. Էներգիայի և նյութերի հոսքը

Էկոհամակարգում: Էկոհամակարգերի Էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և Նյութերի փոխանցումը Էկոհամակարգերում, Էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: **Թեմա 5.** Մարդու առողջության Էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի բիոհական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: **Թեմա 6.** Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության Էկոլոգիացման սկզբունքները: **Թեմա 7.** Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, Նշանակությունը: Ջուրը երկրի վրա և Նրա հատկությունները: Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, Նրա կառուցվածքը և Նշանակությունը բնության մեջ: **Թեմա 8.** Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոի փոխհարաբերությունը: **Թեմա 9.** Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա Էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, 2010:
2. Գրիգորյան Ա., Աղասյան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008:
3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010:
4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Երևան, 2002:
5. Валова В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.

1. 0104/B14	2. Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 Ժամ/շաբ.	5. 15/15/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Մտուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն		35
1. Ձևակերպելու վիճակագրական խնդիրներ: 2. Կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունապատկերը:		
բ. գործնական մասնագիտական կարողություններ		
1. Վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ: 2. Ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ:		
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ		
1. Համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը և կատարելու հետևություններ:		
10.Դասընթացը ձյափորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունք(ներ)ը.		

Գ2. Կիրառելու ժամանակակից S2S-ները գիտելիքի փոխանցման գործընթացը և մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու և դյուրացնելու համար: Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:	
11. Կիրառվում են դասավանդման , ուսումնառության հետյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. ինքնուրույն խատանքներ	
12. Գնահատման մեթոդները , չափանիշներն են. Ստուգաթիվ անց է կացվում բանավոր:	
13. Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Նկարագրական վիճակագրություն: Թեմա 2. Նմուշային եղանակ: Թեմա 3. Գնահատման տեսություն: Թեմա 4. Միջակայքային գնահատականներ:	
14. Հիմնական գրականության ցանկ. 5. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ, Երևան, 2016. 6. Գասպարյան Կ.Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017: 7. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, 2000: 8. Ивченко Г. И., Медведев Ю. И., Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014.	

1. 0304/B15	2. Դրավունքի հիմունքներ	3. 2 կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Ստուգաթիվ	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ: Դասընթացի խնդիրները. • Ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ: • Ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները: 2. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական		

նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը: 3. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ: 2. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում: 3. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:		
10. Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները. Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
11. Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. ռեֆերատ 3. զեկուցում:		
12. Պահանջարկի մեթոդները 3 չափանիշներն են. Ստուգաթիվ Նախապես տրված հարցաշարից անց է կացվում բանավոր հարցում:		
13. Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Պետության և իրավունքի տեսություն: Թեմա 2. Սահմանադրական իրավունք: Թեմա 3. Քաղաքացիական իրավունք: Թեմա 4. Քրեական իրավունք: Թեմա 5. Աշխատանքային իրավունք: Թեմա 6. Ընտանեկան իրավունք: Թեմա 7. Տեղական ինքնակառավարում: Թեմա 8. Վարչական իրավունք: Թեմա 9. Դատավարական իրավունք: Թեմա 10. Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: Թեմա 11. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի 33 օրենսդրություն: Թեմա 12. Միջազգային իրավունք:		
37		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Երևան, 2002: 2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003, 2006: 3. Բարսեղյան Ս., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երևան, 2000: 4. Դիլբանյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 1999: 5. Դարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001: 6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:		

1. 0304 /B12	2. Փիլիսոփայության հիմունքներ	3. 4 ECTS կրեդիտ
--------------	-------------------------------	------------------

4. 4 ժամ/շաբ.	5. 30/0/30
6. 3-րդ կիսամյակ	7. Ստուգարք
8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար: Դասընթացի խնդիրները 1. Բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները: 2. Բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները: 3. Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:	
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները: 2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները: 3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից: 2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը: 3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:	
10. Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները. 38 Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:	
11. Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. սեմինար	

3. քննարկում
4. գեկուցում
5. ռեֆերատ
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաբ. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:
13. Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: Թեմա 2. Կեցություն և մատերիա: Թեմա 3. Դիալեկտիկա: Թեմա 4. Բնություն: Թեմա 5. Մարդ և պրակտիկա: Թեմա 6. Գիտակցություն և ճանաչողություն: Թեմա 7. Գիտություն: Թեմա 8. Հասարակություն:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980: 2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Զ. 1, Երևան, 1987: 3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Զ. 2, Երևան, 1987: 4. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1980: 5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004: 6. Փիլիսոփայության բառարան, Երևան, 1975:

1.0001/ B01, B07	2.Ֆիզդաստիարակություն	3. 0 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6.1-ին, 2-րդ կիսամյակներ	7.Ստուգաբք	
8.Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի. • ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը, • նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը, • բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց, • նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը, • զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և		

այլն:

Դասընթացի խնդիրներն են.

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններն ու հմտություններ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները,
2. թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը,
3. ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները,
4. ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները,
5. առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրել դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ),
2. ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)

1. աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը,
2. դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից,
3. կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:

10.Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները.

Բ5. Կազմակերպելու իր աշխատանքային և ուսումնական գործունեությունը ստացած տեսագործական գիտելիքներին համապատասխան:

11.Կիրառվում են դասավանդման 7 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները.

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
 - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),

- մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- անհատական և խմբային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
- ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),

2. արտաուսումնական պարապմունքներ.

- ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
- վերականգնողական միջոցառումների իրականացում,
- մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
- ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
- մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
- մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշները

Դասընթացն ավարտվում է ստուգաթղթով: Ստուգաթիվը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

13. Դասընթացի թեմատիկ բովանդակությունը. /բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից./

1-ին կիսամյակ

Թեմա 1. Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: **Թեմա 2.** Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազբ: Վազբի տեխնիկայի ուսուցում: Վազբ. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: **Թեմա 3.** Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Չամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: **Թեմա 4.** Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայթարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):

2-րդ կիսամյակ

Թեմա 1. Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրորբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: **Թեմա 2.** Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերևից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի

թեմիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: **Թեմա 5.** Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազբ. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազբ: Կարճ վազբի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազբ արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Երկար վազբի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազբ 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ ոտքերի հրումով: **Թեմա 6.** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: **Թեմա 8.** Ստուգաբային ձևերի նախապատրաստում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա., Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄԿ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ. Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ. Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ. Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաքյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս. Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

1.0001/B13, B16	2. Ֆիզդաստիարակություն	3.0 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6.3-րդ, 4-րդ կիսամյակներ	7.Ստուգաբաթ	
8.Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը 42արժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի. • ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը, • նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը, • բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը, • զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց		

մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն,

- կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց:

Դասընթացի խնդիրներն են.

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկելու սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,
2. ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկելու նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ,
3. հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկելու հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը,
4. թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանելու անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը,
5. ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմամարզության առանձնահատկությունները և մեկնաբանելու նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները,
2. սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնելու օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարելու ինքնավերահսկման օրագիր,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,
4. կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերել նորմատիվներին համապատասխան արդյունքներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնել թեմատիկ հանձնարարականի փոխադարձ վերահսկողություն,
2. աջակցել ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման

ժամանակ, ներկայացնել իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ, 3. վերլուծել դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները, 4. կազմակերպել մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս, 5. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, ցուցաբերել առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում:
10.Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունք(ներ)ը. Բ5. Կազմակերպելու իր աշխատանքային և ուսումնական գործունեությունը ստացած տեսագործական գիտելիքներին համապատասխան:
11.Կիրառվում են դասավանդման 7 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները. 1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ . • տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ), • մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ), • ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ), 2. արտաուսումնական պարապմունքներ. • ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում, • վերականգնողական միջոցառումների իրականացում, • մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի, • ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով, • մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում, • մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:
12.Գնահատման մեթոդները և չափանիշները Դասընթացն ավարտվում է ստուգաթղթով: Ստուգաթղթը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:
13.Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից. 3-րդ կիսամյակ Թեմա 1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության 44 կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: Թեմա 2. Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: Թեմա 3. Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Թեմա 4. Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: Թեմա 5. Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում: Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Թեմա 6. Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: Թեմա 7. Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: Թեմա 8. Սպորտային խաղ սեղանի

թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: **Թեմա 9.** Ակրորբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: **Թեմա 10.** Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով:

4-րդ կիսամյակ

Թեմա 1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: **Թեմա 2.** Ակրորբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերևից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: **Թեմա 5.** Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: **Թեմա 6.** Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: **Թեմա 7.** Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: **Թեմա 8.** Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: **Թեմա 9.** Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: **Թեմա 10.** Վազբ. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արագեքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): **Թեմա 11.** Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: **Թեմա 12.** Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: **Թեմա 13.** Ստուգաբային ձևերի նախապատրաստում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա., Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Յ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄԿ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Յ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Յ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Յ. Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ. Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Յ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ. Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Յ., Կալաքյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս. Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

Կամրնտրական առարկաներ

1.0305/B17	2. Անգլերեն -1	3. 4 ECTS կրեդիտ
-------------------	-----------------------	-------------------------

4. Ժամ/շաբ.	5. 0/60/0
6. 1-ին կիսամյակ	7. Ստուգարք
8. Դասընթացի նպատակն է՝ ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման: Դասընթացի խնդիրները. 1. Ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար: 2. Չարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:	
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը: 2. Թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները: 3. Թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները: 4. Տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս: 2. Ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը: 3. Կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից: 2. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում: 3. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:	
10. Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները. Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:	
46 11. Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձևերն ու մեթոդները. 1. հաղորդակցական մեթոդ 2. մտազրոհ 3. ուսանողական պորտֆոլիո 4. խմբային աշխատանք 5. գրավոր և բանավոր թարգմանություն	

6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույն աշխատանք
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաբերը համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ /և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում. • գրավոր և բանավոր թարգմանություններ, • ռեֆերատ, • պրեզենտացիա, • խմբային աշխատանք, • ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):
13. Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: Բաժին 2. Քերականություն: Խոսքի մասեր: Շարահյուսություն: Բաժին 3. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Համաշխարհային պատմության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Mkhitarian, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan. 2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency. 3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division. 4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College. 5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

1. 0305/B18	2. Անգլերեն-2	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	47
6. 2-րդ կիսամյակ	7. Ստուգաբ.	
8. Դասընթացի նպատակն է՝ հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում: Դասընթացի խնդիրները. 1. Ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը: 2. Հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները:
2. Կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և բերականական կառույցներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընկալելու և վերարտադրելու կարողացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը:
2. Շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան:
3. Կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:
2. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:
3. Ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:

10. Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները.

Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

11. Կիրառվում են դասավանդման 7 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները.

1. հաղորդակցական մեթոդ
2. մտազրոհ
3. ուսանողական պորտֆոլիո
4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույն աշխատանք

12. Պնահատման մեթոդները 7 չափանիշներն են.

Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/ և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.

48

- գրավոր և բանավոր թարգմանություններ,
- ռեֆերատ,
- պրեզենտացիա,
- խմբային աշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ, CV, դիմում, մոտիվացիոն նամակ):

13. Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1.Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: **Բաժին 2.** Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.
2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.
3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.
4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

1.0305 B/17	2.Ֆրանսերեն – 1	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	
6. 1-ին կիսամյակ	7. Ստուգաթիվ	
8.Դասընթացի նպատակն է՝ հարստացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, բերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար: Դասընթացի խնդիրները. 1. խորացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, բերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: 2. Ֆրանսերենի բերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ: 3. Հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները: 2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը: 49 բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները: 2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները: 3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և բերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ): 4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն: 2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:		

3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր: 4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:		
10. Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները. Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
11. Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձեռն ու մեթոդները՝ 1. Անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. դիալոգիկ ստուգում 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք		
12. Գնահատման մեթոդները 3 չափանիշներն են. Ստուգաթիվ Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր հարցում:		
13. Դասընթացը բաղկացած է հետյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. Թեմա 2. Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոգերի և ածանցների միջոցով: Թեմա 3. Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Թեմա 4. Ածական: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից: Թեմա 5. Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Թեմա 6. Թվական: Քանակական և դասական թվականներ և դրանց գործածությունը: Թեմա 7. Դերանուն: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008 2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire). 3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau debutant), 4. M. Djoulhakian, R. Meliksetian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011. 50		

1.0305/B18	2.Ֆրանսերեն – 2	3.4 ECTS կրեդիտ
4.4 Ժամ/շաբ.	5.0/60/0	
6.2-րդ կիսամյակ	7.Ստուգաթիվ	
8. Դասընթացի նպատակն է՝ խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները,		

ֆրանսերենի բերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր մասնագիտական տեքստերից օգտվելու ունակություններ:

Դասընթացի խնդիրները.

1. Խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, բերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա:
2. Ֆրանսերենի բերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:
3. Հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները:
2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները:
2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները:
3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և բերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ):
4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:
2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:
3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:
4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

10.Դասընթացը ձյավորում է կրթական ծրագրի հետյալ վերջնարդյունքները.

Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

11.Կիրառվում են դասավանդման 3 ուսումնառության հետյալ ձյերն ու մեթոդները՝

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. Ինքնուրույն աշխատանք

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**Ստուգաբառ**

Նախապես տրված հարցաշարի շրջանակում անց է կացվում բանավոր հարցում:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Անձ, անձնային աճ, հասուն անձ, ինքնակարգավորում: Հասուն անձի էական բնութագրիչները: Հասուն անձի իմացական, հուզական և վարքային բաղադրիչների նկարագիրը: Անձնային աճ հասկացության պատմական հիմքերը: Անձնային աճի հետևանքով տեղի ունեցող փոփոխությունները: Անձնային աճի ներանձային և միջանձնային գործոնները: Բաժին 2. Անձնային աճին նպաստող հանդիպումների կառուցվածքը, խմբային աշխատանքների օրինակներ: Անձնային աճին նվիրված խմբեր: Անձնային աճի խմբերի կազմակերպման սկզբունքները: Անձնային աճի խմբերի հանդիպումների կառուցվածքը, նպատակները: Բաժին 3. Գործնական հանդիպումներ և վարժանքներ. սեփական ռեսուրսների բացահայտում և ճանաչում, աղեկվատ ինքնագնահատականի կառուցում, ինքնագիտակցության բաղադրիչների վերակառուցում, հուզական ինքնակարգավորման հմտությունների, ամբողջական Ես-կերպարի, կենսական լավատեսության և դրական ինքնընկալման ձևավորում:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Зайцева Т.В., Теория психологического тренинга. Психологический тренинг как инструментальное действие. СПб.: Речь, М.: Смысл, 2002. 2. Карелин А., Большая энциклопедия психологических тестов. Изд. Эксмо, 2007. 3. Рамедник Д.М., Тренинг личностного роста: Учебное пособие. – М.: ФОРУМ: ИНФРА –М, 2007. 4. Шевцова И.В., Тренинг личностного роста, СПб.: Речь, 2003. 5. http://www.essentiallifefskills.net/personaldevelopmentarticles.html		

1. 0303/ B24	2. Իմացական գործընթացների հոգեբանություն և պրակտիկում-2	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 60/30/0	
6. 2 –րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	

8. Դասընթացի նպատակն է՝

1. ուսանողներին ծանոթացնել կոգնիտիվ գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններին, ցույց տալ հոգեկան արտացոլման բարձրագույն ձևերի յուրակերպությունը,
2. ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրների գիտական բացատրությունները,
3. ծանոթացնել դրանց փորձարարական ուսումնասիրման եղանակներին և հիմնական արդյունքներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու կոգնիտիվ գործընթացների աշխատանքի առանձնահատկությունները,
2. ներկայացնելու և վերլուծելու կոգնիտիվ ոլորտի զարգացման օրինաչափությունները,
3. գտնելու և բացատրելու կոգնիտիվ ոլորտի նորագույն հոգեբանական տեսությունները և այդ ոլորտում կատարված ուսումնասիրությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ուսումնասիրելու և վերլուծելու կոնկրետ անհատի կոգնիտիվ ոլորտի անհատական առանձնահատկությունները,
2. կազմելու և իրականացնելու կոգնիտիվ գործընթացների ուսումնասիրման հոգեբանական հետազոտական ծրագրեր,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու կոգնիտիվ տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ,
2. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալել և տարածել նոր տեղեկատվությունը:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Ա4.Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում:

Բ1.Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:

Բ2.Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասընթացի յուրացումը իրականանում է միմյանց միջև փոխադարձ պարապմունքների և կրթության ձևերի միջոցով, որոնց թվին են պատկանում դասախոսությունները, պրակտիկ պարապմունքները, ուսանողների ինքնուրույն աշխատանքը, յուրացման այլ ակտիվ մեթոդներ, պրակտիկ առաջադրանքների իրականացում, գործնական խաղեր, խմբային քննարկումներ:
2. Կարևոր տեղ է հատկացվում ուսանողների ինքնուրույն աշխատանքին, որը ներառում է անցած նյութի կրկնություն՝ կոնսպեկտներով, յուրաքանչյուր թեմայի գրականության հետ ծանոթացում, այդ թվում նաև համացանցի օգնությամբ խմբային քննարկումներին նախապարտքատում:
3. Առարկայի դասավանդումը ենթադրում է նաև ժամանակակից բազմաթիվ գործնական հնարների և մեթոդների մատուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. առավելագույնը՝ 5 միավոր, 25 %:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով:

2-րդ ընթացիկ քննություն. առավելագույնը՝ 5 միավոր, 20 %:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով:

Եզրափակիչ քննություն . առավելագույնը՝ 10 միավոր, 50%:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է բանավոր՝ համաձայն անցած թեմաների կազմված հարցաշարի հարցերին ուսանողների բանավոր պատասխանների միջոցով:

13. Դասընթացը և սեմինարները բաղկացած են հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ընդհանուր հասկացություն հիշողության մասին: Հիշողության ֆենոմենոլոգիան: Հիշողության կազմակերպումը. հիմնական մոտեցումներն ու տեսությունները: Հիշողության դասակարգումը, տեսակները, ձևերը: **Թեմա 2.** Հիշողության եռաբաղադրիչ մոդելը կառուցվածքը և գործընթացները: Հիշողության տարիքային առանձնահատկությունները, զարգացումը: Մենմոտեխնիկաներ: **Թեմա 3.** Մտածողության հասկացությունը: Մտածողության տեսակները: Մտածողության տեսությունները: Մտածողություն և գիտելիք: **Թեմա 4.** Դրդապատճառները և հույզերը մտածողական գործունեությունում: Մտածողության անհատական առանձնահատկությունները: **Թեմա 5.** Զարգացման սկզբունքը մտածողության հոգեբանությունում: Ինտելեկտի հիմնախնդիրը: **Թեմա 6.** Լեզու և խոսք: Խոսքի տեսությունները: **Թեմա 7.** Երևակայությունը որպես ճանաչողական գործընթաց: Երևակայության տեսությունները: Երևակայության զարգացումը և նրա գնահատումը: Երևակայության դերը ստեղծագործական աշխատանքում:

Գործնական աշխատանքների թեմատիկ պլան

1. Կարճատեւ հիշողության ծավալի ուսումնասիրում (Ջեկոբսի մեթոդը):
2. Օպերատիվ հիշողության առանձնահատկությունների ուսումնասիրում: 74
3. Ոչ կամաձին եւ կամաձին մտապահման արդյունավետության ուսումնասիրումը (Պ.Ջինչենկոյի մեթոդիկան):
4. Անմիջական եւ միջնորդավորված մտապահման ուսումնասիրումը:
5. Պիկտոգրամմաների մեթոդը:
6. Մտապահման վրա նյութի իմաստավորվածության ազդեցության ուսումնասիրումը:
7. Մտապահման կախվածությունը անձի դիրքորոշումներից:
8. Հիշողության մեջ պահպանման ժամանակ նյութի որակական փոփոխությունների ուսումնասիրումը:
9. Մտածողական գործընթացների ռիզիկոյության ուսումնասիրումը (նախկինի փորձի ազդեցությունը խնդրի լուծման միջոցի վրա):
10. Ակնառու-պատկերավոր մտածողության ուսումնասիրում («Պիկտոգրամմա» մեթոդիկան):

11. Ստեղծագործական եւ վերարտադրողական մտածողության ուսումնասիրում (դիրքորոշման ազդեցությունը մտածողական գործունեության յուրահատկության վրա):
12. Արտիկուլյար խոչընդոտների առկայության պարագայում խոսքի հասկացման ուսումնասիրում:
13. Պատկերացումներ եւ երեւակայություն:
14. Երեւակայության արդյունավետության ուսումնասիրում:
15. Երեւակայության անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում:
16. Ստեղծագործական երեւակայության ուսումնասիրում
14. Հիմնական գրականության ցանկ.
1. Зинченко Т. П. Память в экспериментальной и когнитивной психологии.-СПБ.; Питер, 2002
2. Надлер Дж., Хибино М., Фаррелл Дж. Мышление полного спектра. Минск, Попурри,2001
3. Психология памяти. Под ред. Ю. Б. Гиппенрейтер, В.Ф. Спиридонова М.;Астерь,2008
4. Хозиев В. Б. Практикум по общей психологии; Учебное пособие для студ. Высш. Учебн,заведений. М, Академия,2003
5. Philip Quinlan, Philip T. Quinlan, Ben Dyson. 2008. <i>Cognitive Psychology</i> . Publisher- Pearson/Prentice Hall.

1. 0303/ B25	2. Հոգեբանության պատմություն	3. 5 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/ շաբ.	5. 45/0/15	
6.2-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է՝ - ներկայացնել ուսանողներին առարկայի հիմնախնդիրներն ու բովանդակությունը, հոգեբանության գիտության զարգացման ուղին, - ներկայացնել հոգեկանի՝ որպես հոգեբանության ուսումնասիրության առարկայի զարգացումը պատմական տարբեր ժամանակաշրջաններում, - ծանոթացնել այն կարևորագույն հարցերին, որոնք առնչվում են հոգեբանության գիտության ձևավորմանը, զարգացման ընթացքին, կառուցվածքին, ինչպես նաև ժամանակակից հայեցակարգերին, միջառարկայական և միջբնագավառային նշանակությանը, հայ հոգեբանական մտքի զարգացմանը: - վերլուծել և ներկայացնել նաև հոգեբանության գիտության զարգացումը Հայաստանում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - ճանաչելու հոգեբանության գիտության նախահիմքերը, բնութագրելու հոգեբանության գիտական համակարգը, ներկայացնելու վերջինիս կառուցվածքը, խնդիրները և մեթոդները, - մեկնաբանելու հոգեբանական տեսությունները, դպրոցների, ուղղությունների, նրանց հայեցակարգերի և տեսական հայացքների դրույթները, - ներկայացնելու հոգեկանի ծագման և զարգացման հիմնախնդիրը, հոգեկանի ուսումնասիրության էմպիրիկ կողմը, փորձարարական ուղին և հետազոտական բնույթը,		
բ. գործնական մասնագիտական կարողություններ - կատարելու վերլուծաճանաչողական աշխատանքներ իրենց մասնագիտության համար, - մեկնաբանելու հոգեկանի կառուցվածքը, հոգեկան երևույթները, գործընթացները և հատկությունները իրենց պատմական զարգացման ընթացքում, - իրականացնելու ուսումնասիրություններ հոգեբանության տեսությունների և մոտեցումների, փորձարարական ուսումնասիրության վերաբերյալ:		
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 9. մշակելու հոգեբանության մասնագիտական գրականություն, պատրաստելու բանավոր զեկուցում և վարելու գիտական բանավեճ:		

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա1. Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Ա4. Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում: Բ3. Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ: Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունք 3. քննարկում, 4. բանավեճ, 5. գրականության ինքնուրույն վերլուծություն <i>և բանավոր գեղարվեստ:</i>		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. առանց եզրափակիչ գնահատման 1-ին ընթացիկ քննություն. (առավելագույնը՝ 5 միավոր, 25 %: <i>Գնահատման մեթոդ.</i> Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով: 2-րդ ընթացիկ քննություն. առավելագույնը՝ 5 միավոր, 20 %: <i>Գնահատման մեթոդ.</i> Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով: Եզրափակիչ քննություն . առավելագույնը՝ 10 միավոր, 50%: <i>Գնահատման մեթոդ.</i> Իրականացվում է բանավոր՝ համաձայն անցած թեմաների կազմված հարցաշարի հարցերին ուսանողների բանավոր պատասխանների միջոցով:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Անտիկ շրջան և միջգիտական հոգեբանություն. հոգեբանության փիլիսոփայական հիմքերը: Թեմա 2. Միջնադար. գիտակցության հիմնախնդիրները և արաբական փիլիսոփայության զարգացումը: Թեմա 3. Վերածնունդից հետո մինչև նորագույն շրջան. հոգեբանության գիտության զարգացման և ձևավորման ամփոփում: Թեմա 4. Նորագույն շրջան. հոգեբանության ժամանակակից ուղղությունները: 76 Բոլոր այս բաժիններում առանձնակի տեղ է հատկացվում հայ հոգեբանական մտքի զարգացմանը:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Հոգեբանություն (Դեմքեր, փաստեր): Խմբ. Հ. Ավանեսյան, Եր.: 2010 2. Հայ հոգեբանների միջազգային ներուժը, ԵՊՀ, Ե.: 2015, 75էջ 3. Лучинин А.С., История Психологии, изд. Экзамен, М.: 2005, 288с 4. Ярошевский М.Г., История психологии.— 3-е изд.— М., 1985 5. Петровский А.В., Ярошевский М.Г., История и теория психологии: В 2 т. Ростов н/Д., 1996, 416		

1. 0303/ B26	2. Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն	4 կրեդիտ
4. 4 ժամ/ շաբ.	5. 45/0/15	
6. 2-րդ կիսամյակ	7. առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝

1. ծանոթացնել ուսանողներին բանական մարդու ծագման, հոգեկանի առաջացման և զարգացման էվոլյուցիային, մարդաբանության ուսումնասիրման բաժիններին, անթրոպոգենեզի վարկածներին, գոռոհոգեբանության և էթոլոգիայի հետազոտությունների ժամանակակից վերլուծություններին,
2. փոխանցել գիտելիքներ մարդու ֆիլոգենետիկական և օնոտոգենետիկական զարգացման, հոգեկան ընդունակությունների առաջացման օրինաչափությունների, պերցեպտիվ հոգեկանի, ինտելեկտի և անհատական կազմավորման, մարդու և կենդանիների հոգեկան
3. գործընթացների որակական տարբերությունների վերաբերյալ,
4. ծանոթացնել կենսասոցիալական տեսանկյունից մարդու և կենդանիների էվոլյուցիայի վարքային առանձնահատկությունների դրսևորումների տարբերություններին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանել և մեկնաբանել մարդու և կենդանիների վարքի դրսևորումները էվոլյուցիոն հոգեբանության տեսանկյունից,
2. ներկայացնել և քննարկել համեմատական հոգեբանության զարգացման ժամանակակից միտումները և ուսումնասիրվող հիմնախնդիրները,
3. թվարկել և բացատրել հոգեկանի զարգացման մակարդակները՝ ստորակարգ կենդանիներից մինչև մարդ
4. քննարկել կենդանիների վարքի ուսումնասիրման տարբեր տեսությունների սահմանափակումները և կիրառական նշանակությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծել և համեմատել ստորակարգ և բարձրակարգ կենդանիների հոգեկան դրսևորումների առանձնահատկությունները,
2. տարանջատել կենդանիների վարքի ուսումնասիրման հիմնական բնութագրիչները պերցեպտիվ հոգեկանի զարգացման տարբեր փուլերում
3. ձևակերպել մարդու և կենդանիների հոգեկան գործունեության ուսումնասիրման մեթոդաբանությունը:

գ. ընդհանրական/հոխանցելի կարողություններ

1. պատրաստել բանավոր զեկուցում և ակնարկ (էսսե), գիտական քննարկումներ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2. Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները:

Բ3. Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

77

Գ3. Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4. Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք
3. քննարկում,
4. գրականության ինքնուրույն վերլուծություն և բանավոր զեկուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են 1-ին ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը 10 միավոր. <i>Գնահատման մեթոդ</i>՝ ամփոփ վերլուծական գրավոր պատասխաններ հարցերին, <i>Գնահատման չափանիշները</i>՝ նյութի ինքնուրույն վերլուծություն, պատասխանների ամբողջականություն: 2-րդ ընթացիկ ստուգումը՝ գնահատվում է առավելագույնը 10 միավոր. <i>Գնահատման մեթոդները</i>՝ ինքնուրույն աշխատանքի գնահատում (ռեֆերատ, ակնարկ՝ էսսե), <i>Գնահատման չափանիշները</i>՝ կատարված աշխատանքի թեմատիկ համապատասխանությունը և ինքնուրույն վերլուծությունը:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Կյանքի ծագման վարկածները: Մարդաբանության պատմական ակնարկ: Սոցիալական մարդաբանություն: Ինտելեկտի ձևավորումը: Հոգեկանի էվոլյուցիան: Մարդու էվոլյուցիայի հիմնական փուլերը: Մարդու կազմավորման գնահատման մեթոդները: Անթրոպոլոգիայի սոցիալական վարքը: Աքսելերացիայի զարգացման հիմնախնդիրը և կենսաբանական տարիքի չափորոշիչները: Նյութական մշակույթը և կենսաբանական օրինաչափությունները: Էթնիկական մարդաբանություն: Բաժին 2. Համեմատական հոգեբանության կենսաբանական հիմունքները: Հմտությունների ձևավորումը կենդանիների մոտ: Կինեզներ և տաքսիսներ: Կենդանիների զգայության և ըմբռնման ուսումնասիրման մեթոդները: Կենդանիների վարքը և հաղորդակցումը: Ուսուցանումը և ընտելացումը կենդանիների մոտ:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Պապոյան Վ.Ռ., Դասախոսություններ մարդաբանությունից, Երևան, 2004 2. Мандель Б.Р., Зоопсихология и сравнительная психология. Новый модульный курс [Электронный ресурс] : Учеб. пособие / Б. Р. Мандель. - М.: Вузовский учебник; ИНФРА-М, 2014. - 304 с. 3. Филиппова Г.Г., Зоопсихология и сравнительная психология, Москва, 2004		
1. 0303/B27	2. Հոգեֆիզիոլոգիա	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/ շաբ.	5. 45/0/15	
6. 3-րդ կիսամյակ	7. Էզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է՝ ձևավորել հոգեկան գործընթացների, վիճակների և հատկությունների ֆիզիոլոգիական օրինաչափությունների, հոգեֆիզիոլոգիական տարբեր դպրոցների կողմից ընդունված տեսությունների և հայեցակարգերի վերաբերյալ լիարժեք մասնագիտական գիտելիքներ:		

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. Մահմանելու և մեկնաբանելու մարդու հոգեկանի գործառնության ուղեղային ապահովումը, գլխուղեղում դրանց լոկալիզացիան, բացատրելու և մեկնաբանելու միջկիսագնդային անգուգաչափության դերը հոգեկանի գործառնության դրսևորումներում:
2. Ներկայացնելու և քննարկելու հոգեկան գործընթացների վեգետատիվ կոռեյաստները:
3. Ներկայացնելու տարբեր հոգեկան գործընթացների ուսումնասիրման համար նախատեսված համապատասխան հոգեֆիզիոլոգիական մեթոդները:
4. Մեկնաբանելու տարբեր հոգեկան գործընթացների հոգեֆիզիոլոգիական մոտեցումները, հայեցակարգերը և տեսությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու ստացված գիտելիքները՝ հոգեկանի գործառնության առանձնահատկությունները բացատրելու համար:
2. Որոշելու հոգեկան վիճակների վեգետատիվ և ուղեղային կոռեյաստները:
3. Կանխատեսելու հոգեկանի զարգացման ուղին՝ հիմնվելով գլխուղեղի գործառնության առանձնահատկությունների վրա:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու հոգեկան հատկությունների, գործընթացների և վիճակների ուսումնասիրման հոգեֆիզիոլոգիական մեթոդները և հնարքները,
2. Վերլուծելու հոգեֆիզիոլոգիական ցուցանիշները:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա2. Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Բ1. Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:

Բ2. Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Բ3. Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

79

Գ1. Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք
3. գործնական պարապմունք
4. դիսկուրսներ, բանավեճեր,
5. գրականության ինքնուրույն վերլուծություն,

6. Բանավոր զեկուցում:
11. Գնահատման մեթոդները և չափանիշներն են 1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր Գնահատման չափանիշներ. նյութի ճիշտ մեկնաբանություն, ինքնուրույնություն: 2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր. Գնահատման մեթոդ. ամփոփ տրամաբանական պատասխաններ հարցերին՝ գրավոր կերպով, թեստային աշխատանք Գնահատման չափանիշներ. նյութի ճիշտ մեկնաբանություն, ինքնուրույնություն: Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր.. Գնահատման մեթոդ. Բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի: Գնահատման չափանիշներ. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ:
11. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Հոգեֆիզիոլոգիայի ներածություն: Բաժին 2. Պերցեպտիվ գործընթացների հոգեֆիզիոլոգիա: Բաժին 3. Գիտակցված վարքի և շարժման հոգեֆիզիոլոգիա: Բաժին 4. Կոգնիտիվ գործընթացների հոգեֆիզիոլոգիա: Բաժին 5. Ուսուցման հոգեֆիզիոլոգիա: Բաժին 6. Հույզերի հոգեֆիզիոլոգիա: Բաժին 7. Սթրեսի հոգեֆիզիոլոգիա: Բաժին 8. Գիտակցության հոգեֆիզիոլոգիա: Բաժին 9. Քնի հոգեֆիզիոլոգիա: Բաժին 10. Միջկիսագնդային անգուգաչափություն:
12. Հիմնական գրականության ցանկ. 1. Գրիգորյան Վ. Հ. Հոգեֆիզիոլոգիա. Եր.: ԵՊՀ. հրատ., 2014, 465 էջ 2. Психофизиология / Под ред. Ю. И. Александрова. 4-е изд. Питер пресс, 2016, 464 с. 3. Лурия А. Р. Основы нейропсихологии. М., Изд-во Академия. 2006. 381с. 4. Психофизиология: Учебник для вузов / Н. Н. Данилова М.: Аспект Пресс, 2012. 368 с. 5. Handbook of Psychophysiology // Edited by J. T. Cacioppo, L. G. Tassinari, G. Berntson. Cambridge University Press, 2007, P. 914.

1. 0303/ B28	2. Անձի հոգեբանություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/ շաբ.	5. 30/30/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է՝ • ծանոթացնել ուսանողներին անձի հոգեբանության հիմնարար խնդիրներին⁸⁰ • փոխանցել գիտելիքներ անձի հոգեբանական կենտրոնական առանձնահատկությունների մասին • ծանոթացնել ուսանողներին անձի ուսումնասիրման հնարավորությունները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու և մեկնաբանելու անձի հոգեբանության առարկան, խնդիրները, հիմնահարցերը: 2. Ներկայացնելու և բացատրելու անձի կառուցվածքի, զարգացման, դրդապատճառային և արժեքմաստային ոլորտների առանձնահատկությունները: 3. Ներկայացնելու անձի հոգեբանության ներառարկայական և միջառարկայական կապերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Իրականացնելու հետազոտական աշխատանքներ՝ անձի տարբեր հոգեբանական առանձնահատկությունները ուսումնասիրելու համար:		

2. Վերլուծելու, համադրելու և ընդհանրացնելու անձի զարգացման գործոնները և պայմանները:
3. Վերլուծելու հետազոտական տարբեր նյութեր՝ հիմնվելով ունեցած գիտելիքների վրա:

Գ. ընդհանրական/հոխանցելի կարողություններ

- 1.** պատրաստելու բանավոր զեկուցումներ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Բ2.Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Գ3.քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք
3. քննարկում,
4. բանավեճ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը 10 միավոր.

Գնահատման մեթոդ՝ ամփոփ վերլուծական գրավոր պատասխաններ հարցերին, Գնահատման չափանիշները՝ նյութի ինքնուրույն վերլուծություն, պատասխանների ամբողջականություն

2-րդ ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը 10 միավոր.

Գնահատման մեթոդները՝ ինքնուրույն աշխատանքի գնահատում (ռեֆերատ, ակնարկ՝ էսսե), Գնահատման չափանիշները՝ կատարված աշխատանքի թեմատիկ համապատասխանությունը և ինքնուրույն վերլուծություն:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Անձի հոգեբանության մեթոդաբանական հարցեր: **Բաժին 2.** Անձի ուսումնասիրման մեթոդները և սկզբունքները: **Բաժին 3.** Անձի հոգեբանական կառուցվածք: **Բաժին 4.** Անձի զարգացում. շարժիչ ուժերը և առանձնահատկությունները: **Բաժին 5.** Ինքնագիտակցություն և Ես-կոնցեպցիա: **Բաժին 6.** Անձի դրդապատճառային ոլորտ: **Բաժին 7.** Անձի արժեքմաստային ոլորտի առանձնահատկությունները դրդապատճառային կարգավորման մեջ: **Բաժին 8.** Գաղափար անձնային առողջության մասին:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Асмолов А.Г., Психология личности, М., Изд. Смысл, 2007.
2. Первин Л.А., Джон О.П., Психология личности: Теория и исследования. М., 2000.
3. Психология личности./ под ред. П.Н. Ермакова, В.А. Лабунской. 2008.
4. Слотина Т.В., Психология личности. СПб.; Питер, 2008.
5. Хекхаузен Х., Мотивация и деятельность, СПб.: Питер; М.: Смысл, 2003.

1. 0303/ B29	2. Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/ շաբ.	5. 30/30/15	
6. 3-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է՝ • ծանոթացնել ուսանողներին դիֆերենցիալ հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին, • փոխանցել գիտելիքներ անձի խառնվածքի, բնավորության և ընդունակությունների անհատական տարբերությունների ձևավորման և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ:		
8. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու և մեկնաբանելու դիֆերենցիալ հոգեբանության մեթոդաբանական հարցերի և զարգացման ժամանակակից միտումները, 2. քննարկելու խառնվածքի, բնավորության և ընդունակությունների ուսումնասիրման դասական և ժամանակակից մոտեցումները, 3. թվարկելու և բացատրելու խառնվածքի, բնավորության և ընդունակությունների տիպոլոգիական առանձնահատկությունները, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. վերլուծելու անհատական տարբերությունները, դրանց զարգացման օրինաչափությունները և մեխանիզմները, 2. կիրառելու անհատական տարբերությունների բացահայտման ախտորոշիչ մեթոդիկաներ և վերլուծելու դրանց արդյունքները: 3. ախտորոշելու և վերլուծելու խառնվածքի, բնավորության և ընդունակությունների անհատական տարբերություններն ըստ տարբեր տիպոլոգիական մոտեցումների, գ. ընդհանրական/հոփսանցելի կարողություններ 1. պատրաստելու բանավոր զեկուցում և վարելու գիտական բանավեճ, 2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. 82 Ա1. Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Ա4. Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Բ2. Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ: Գ4. Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - դասախոսություն, - սեմինար պարապմունք, - գործնական պարապմունք (ինքնուրույն առաջադրանքների կատարում, թեստերի և մեթոդիկաների կիրառում):		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. 1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր: <i>Գնահատման մեթոդ.</i> ամփոփ պատասխաններ հարցերին գրավոր կերպով, թեստային առաջադրանքներ: <i>Գնահատման չափանիշներ.</i> մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն, ճիշտ պատասխանի ընտրություն: 2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր: <i>Գնահատման մեթոդ.</i> ամփոփ պատասխաններ հարցերին գրավոր կերպով, թեստային առաջադրանքներ: <i>Գնահատման չափանիշներ.</i> մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն, ճիշտ պատասխանի ընտրություն: Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր.. <i>Գնահատման մեթոդ.</i> բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի: <i>Գնահատման չափանիշներ.</i> հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական և հիմնավորված պատասխաններ:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Դիֆերենցիալ հոգեբանության մեթոդաբանական հիմքերը: Դիֆերենցիալ հոգեբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության ուղղությունները: Դիֆերենցիալ հոգեբանության մեթոդները: Հասկացություն անհատականության մասին: Անհատականության կառուցվածք: Բաժին 2. Խառնվածքը որպես անհատական առանձնահատկություն: Խառնվածքի մասին պատկերացումների ձևավորում: Խառնվածքի ուսումնասիրության կոնստիտուցիոնալ մոտեցում: Խառնվածքի ուսումնասիրության հոգեֆիզիոլոգիական մոտեցում: Խառնվածքի ուսումնասիրության գործոնային մոտեցում: Ժամանակակից ուսումնասիրություններ. հոգեգեներտիկ և լոնգիտյուդ հետազոտություններ: Բաժին 3. Բնավորությունը որպես անհատական առանձնահատկություն: Բնավորությունը որպես անհատական առանձնահատկություն. տարբեր մոտեցումներ և մեկնաբանություններ: Բնավորություն և անձ. բնավորության կառուցվածք, բնավորության գծեր: Բնավորության նորմա և պաթոլոգիայի հիմնախնդիրը: Բնավորության և անձի շեշտվածություն: Բնավորության ձևավորման հիմնախնդիրը. պայմաններ և մեխանիզմներ: Բաժին 4. Ընդունակությունները որպես անհատական տարբերություններ: Ընդունակությունների հիմնախնդրի ձևավորումը: Ընդունակությունները որպես անհատական առանձնահատկություններ: Ընդունակությունների կառուցվածքը. Ընդունակությունների տեսակները⁸³ ըստ տարբեր դասակարգումների: Ընդունակությունների զարգացում: Օժտվածության հիմնախնդիրը: Մտավոր ընդունակությունների և ինտելեկտի ուսումնասիրություններ:		
14. Հիմնական գրականության ցանկ. - Ильин Е.П. Психология индивидуальных различий. СПб.: Питер, 2004. - Нартова-Бочавер С.К. Дифференциальная психология: Учебное пособие для студентов. – М.: МГППУ, 2007. - Психология индивидуальных различий. Хрестоматия. Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.Я. Романова, М.: ЧеРо, МПСИ, 2006.		

1. 0303/ B30	2. Սոցիալական հոգեբանություն	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 60/30/0	

6. 3-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տրամադրել հիմնարար գիտելիքներ սոցիալական հոգեբանության, սոցիալական գործընթացների և երևույթների, ինչպես նաև դրանց փոխակերպումների մասին:	
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու հոգեբանության պատմությունը, սահմանելու և բացատրելու նրա հիմնական հասկացությունները, 2. տարբերակելու հիմնարար սոցիալ-հոգեբանական գործընթացների և երևույթների, ինչպես նաև սոցիալական հոգեբանության կիրառության դաշտը, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ուսումնասիրելու և մեկնաբանելու սոցիալ-հոգեբանական գործընթացները և երևույթները, 2. վերլուծելու սոցիալ-հոգեբանական հարաբերությունների առանձնահատկությունները, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. կիրառելու սոցիալ-հոգեբանական գիտելիքները գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելիս: 2. ուսումնասիրելու տարբեր սոցիալական խմբերի հոգեբանական առանձնահատկությունները:	
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Ա2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները: Բ3.Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ: Գ3.քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:	
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունք 3. քննարկում, 4. բանավեճ, 5. գրականության ինքնուրույն վերլուծություն և բանավոր զեկուցում:	84
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. 1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր. Գնահատման մեթոդ. ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով: Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն: 2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր. Գնահատման մեթոդ. ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով: Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն: Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր.. Գնահատման մեթոդ. բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի: Գնահատման չափանիշներ. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական	

պատասխաններ, ամբողջականություն, նյութի տիրապետման աստիճան և ներկայացման որակ:	
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Անհատ-զանգված, հոգեկան փոխակերպությունների խնդիրը: Թեմա 2. Զանգվածների հոգեկանի կառուցվածքը: Թեմա 3. Զանգվածների հավատն ու սպասելիքները: Թեմա 4. Առաջնորդ-զանգված՝ սոցիալական առաջնորդության և իշխանության խնդիրը: Թեմա 5. Առաջնորդի հոգեբանական դիմանկարը: Թեմա 6. Ներագրման մեխանիզմները զանգվածներում: Թեմա 7. Սոցիալական դիրքորոշման ուսումնասիրման պատմությունը:	
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Андреева Г. М. Социальная психология М. Аспект, Пресс, 2004 2. Майерс Д., Социальная психология. «Питер» 2011 3. Свенцицкий А., Социальная психология, Москва, Проспект, 2004г. /5 հատ/ 4. Семечкин Н., Социальная психология на рубеже веков. Вл. 2005 5. Чалдини Р., Психология влияния, «Питер» 2011	

1. 0303/ B31	2. Կրթության հոգեբանություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0/15	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է՝ 1. ծանոթացնել ուսանողներին կրթության կառուցվածքին, ուսումնական և մանկավարժական գործունեության հոգեբանական առանձնահատկություններին և օրինաչափություններին, 2. տրամադրել տարբեր տարիքային փուլերում սովորողների կրթության կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ, ձևավորել դպրոցին հոգեբանական պատրաստվածության և ուսումնական մոտիվացիայի հոգեախտորոշման հմտություններ: 3. ձևավորել առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող սովորողների առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. բնութագրելու կրթությունը՝ որպես համակարգ և գործընթաց, թվարկելու այդ գործընթացի սուբյեկտների՝ աշակերտի և մանկավարժի հոգեբանական բնութագրերը, 2. սահմանելու ուսումնական գործունեության բնութագրերը, ներկայացնելու կառուցվածքը, առարկայական բովանդակությունը, բնութագրելու ուսումնական մոտիվացիայի տեսակներն ու տարիքային առանձնահատկությունները: 3. նկարագրելու կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող ⁸⁵ սովորողների առանձնահատկությունները, սահմանելու ներառական կրթության սկզբունքները և էությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. գնահատելու տարբեր տարիքի սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակը, 2. կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդիկաներ դպրոցական ուսուցմանը երեխայի հոգեբանական պատրաստվածությունը որոշելու համար: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ), 2. ստեղծագործաբար կիրառելու յուրացրած գիտելիքը և հմտությունները:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա2. Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները մարդու հոգեկան զարգացման		

օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Ա4. Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում:

Բ2. Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Բ3. Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն, գործնական պարապմունքներ,
2. ինտերակտիվ մեթոդներ, քննարկում,
3. հանձնարարված գրականության ընթերցում և վերլուծություն,
4. ինքնուրույն արտաստանային անհատական աշխատանքներ (անհատական հոգեախտորոշիչ ուսումնասիրություններ և դրանց արդյունքների ներկայացում)

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր,

Գնահատման մեթոդները. ամփոփ գրավոր պատասխաններ հարցերին,

Գնահատման չափանիշները. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ:

2-րդ ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր

Գնահատման մեթոդները. ինքնուրույն աշխատանքի գնահատում (հոգեախտորոշիչ

ուսումնասիրություն-ների իրականացում և դրանց արդյունքների գրավոր ներկայացում),

Գնահատման չափանիշները. իրականացված ուսումնասիրությունների խորություն, կիրառված մեթոդների բազմազանություն, արված եզրակացությունների որակ:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Կրթություն: Կրթության ժամանակակից հարացույցը: **Թեմա 2.** Ուսուցումը կրթության կառուցվածքում: Ուսումնական գործունեություն: **Թեմա 3.** Մանկավարժական գործունեություն: **Թեմա 4.** Կրթական գործընթացի սուբյեկտները՝ մանկավարժ և սովորող: **Թեմա 5.** Առանձնահատուկ կրթական կարիքներ և ներառական կրթություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Овчарова Р.В., Практическая психология образования.- М., 2003
2. Педагогическая психология: Учеб. для студ. высш учеб заведений / Под ред. Н.В. Ключевой. - М.: ВЛАДОС-ПРЕСС, 2003
3. Педагогическая психология: учебное пособие /Под ред. И.Ю. Кулагиной. - М.: ТЦ сфера, 2008
4. Столяренко Л.Д., Педагогическая психология. — Ростов н/Д: Феникс, 2003

1. 0303/ B32	2. Հուզականային ոլորտի հոգեբանություն և պրակտիկում	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/ շաբ.	5. 45/30/15	
6. 4-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	

8. Դասընթացի նպատակն է՝

1. ծանոթացնել անձի հուզական և կամային ոլորտների վերաբերյալ առկա հոգեբանական ժամանակակից տեսություններին և հետազոտություններին,
2. տրամադրել գիտելիքներ հուզականային ոլորտի ուսումնասիրման կենսաբանական, ֆիզիոլոգիական, հոգեբանական, սոցիալական, մշակութային նոր մոտեցումների մասին,
3. ծանոթացնել հույզերի ախտորոշման հիմնական մեթոդներին,
4. ծանոթացնել հույզերի, հուզական վիճակների, կամքի հետ հոգեբանական շտկողական աշխատանքների հիմնական մոտեցումներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու և մեկնաբանելու հուզականային ոլորտի հոգեբանություն առարկայի հիմնական կատեգորիաները և ֆենոմենները,
2. ներկայացնելու և քննարկելու հուզականային ոլորտի հոգեբանության զարգացման ժամանակակից միտումները և ուսումնասիրվող հիմնախնդիրների շրջանակը,
3. ճանաչելու, թվարկելու և բացատրելու հիմնական բազային հույզերը, սահմանելու, հուզական վիճակները,
4. ճանաչելու և մեկնաբանելու անձի տարբեր տեսությունների սահմանափակումները և կիրառական նշանակությունը

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. համեմատելու և վերլուծելու առարկայի հիմնական կատեգորիաները տարբեր հոգեբանական հայեցակարգերի դիտանկյունից,
2. կազմելու հույզերի և կամքի հետազոտման մեթոդական ծրագիր
3. ձևավորելու անձի հուզական ոլորտի ուսումնասիրման տեսական և գործնական ծրագիր՝ կախված տարբեր կիրառական խնդիրներից:

գ. քննիանքական/հիփոսանցելի կարողություններ

1. կատարելու նշված ոլորտում հետազոտություններ, ներկայացնել այն կազմելով բանավոր զեկուցում և վարել գիտական բանավեճ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Մ1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Մ2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Բ1.Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:

Բ3.Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

Գ1.Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունք, 3. պրակտիկ աշխատանքներ, 4. քննարկում, 5. բանավեճ, 6. հետազոտական աշխատանքների իրականացում և դրա ներկայացում, 7. գրականության ինքնուրույն վերլուծություն և բանավոր զեկուցում:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. 1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր. <i>Գնահատման մեթոդ.</i> ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով: <i>Գնահատման չափանիշներ.</i> մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն: 2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր. <i>Գնահատման մեթոդ.</i> ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով: <i>Գնահատման չափանիշներ.</i> մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն: Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր. <i>Գնահատման մեթոդ.</i> բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի: <i>Գնահատման չափանիշներ.</i> հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հույզերի հետազոտման պատմական ակնարկ: Թեմա 2. Հույզերը հոգեկանի համակարգում: Թեմա 3. Հույզերի ֆիզիոլոգիական հիմքերը: Թեմա 4. Հույզերի հիմնական տեսությունները: Թեմա 5. Հույզերի նյարդամկանային, միմիկական առանձնահատկությունները և դրանց մշակութային առանձնահատկությունները: Թեմա 6. Հույզերի առաջացման պատճառները: Թեմա 7. Հուզական վիճակներ: Թեմա 8. Կամքի սահմանումը, գործառնությունները, հիմնական տեսությունները: Թեմա 9. Կամքի հատկությունները և զարգացման տարիքային ասպեկտները: Թեմա 10. Կամային ակտի կառուցվածքը, կամքի պայթյունը:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Հարությունյան Ն., Ասրիյան Է., Ստեփանյան Լ., Հուզականային ոլորտի հոգեբանության. պրակտիկում, Երևան 2014. – 172 էջ 2. Изард К.Э., Психология эмоций., СПб., 2006 3. Ильин Е. П., Психология воли. 2-е изд. — СПб.: Питер, 2009. — 368 с.: ил. — (Серия «Мастера психологии»). 4. Психология состояний. Хрестоматия. Составители Т.Н. Васильева, Г.Ш. Габдрахманов, А.О. Прохоров. /Под ред. проф. Прохорова А.О. – М.: Пер СЭ; СПб.: Речь, 2004. – 608 с. 5. Экман П., Психология эмоций., М., 2011, 336 с.		

1. 0303/ B33	2. Անձի տեսություններ	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/ շաբ.	5. 60/0/15	
6. 4-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատում	
8. Դասընթացի նպատակն է՝ 1. ծանոթացնել ուսանողներին անձի ուսումնասիրման արևմտյան տարբեր ուղղություններին և տեսություններին, 2. փոխանցել և ձևավորել գիտելիքներ անձի տեսությունների հասկացությունների և հայեցակարգերի վերաբերյալ:		

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. թվարկելու և բացատրելու անձի տեսության գործառնությունները, գնահատման չափանիշները և բաղադրիչները,
2. ներկայացնելու և քննարկելու անձի տարբեր ուղղությունների և տեսությունների հիմնադրությունները,
3. սահմանելու և մեկնաբանելու հոգեվերլուծական, բիոհեվիոքիստական, սոցիալ-կոգնիտիվիստական և հումանիստական տեսությունների հիմնական հասկացությունները և դրանց կիրառական նշանակությունը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծելու առանձին տեսություններ ըստ գնահատման չափանիշների,
2. համեմատելու տարբեր տեսությունների հիմնադրությունները և հասկացությունները,
3. կիրառելու տեսության հասկացությունները անձնային առանձնահատկությունները վերլուծելու և հասկանալու համար:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու բանավոր զեկուցում և վարելու գիտական բանավեճ,
2. քննադատորեն վերլուծելու տեսությունների առավելությունները և սահմանափակումները:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Բ3.Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
սեմինար պարապմունք (նյութի վերարտադրում, զեկուցումներ, խմբային քննարկումներ):

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր. 89

Գնահատման մեթոդ. ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով:

Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն:

2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր.

Գնահատման մեթոդ. ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով:

Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն, ամբողջականություն, նյութի տիրապետման աստիճան և ներկայացման որակ:

Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր.

Գնահատման մեթոդ. բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի:

Գնահատման չափանիշներ. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հոգեվերլուծական տեսություններ: Ռադիկալ հոգեվերլուծության հիմնադրույթները, ենթատեսություններ, հիմնական հասկացություններ (Ֆրոյդ): Անալիտիկ հոգեբանության հիմնադրույթները (Յունգ): Անհատական հոգեբանության հիմնադրույթներ (Ադլեր): Նեոհոգեվերլուծության ուղղությունները և հիմնադրույթները. Էգո-հոգեբանություն (Էրիքսոն), մշակութային հոգեվերլուծություն (Հորնի, Ֆրոմ):

Բաժին 2. Բիհեվիորիստական ուղղություն: Բիհեվիորիստական հոգեբանության հիմնադրույթները: Սոցիալական ուսուցման տեսության հասկացությունները (Սկիններ): Ռեսպոնդենտ և օպերանտ վարք: Վարքի ամրապնդում և ամրապնդման ռեժիմներ: Վարքի վերահսկում և փոփոխություն:

Բաժին 3. Սոցիալ-կոգնիտիվիստական տեսություններ: Սոցիալ-կոգնիտիվիստական տեսության հիմնադրույթները (Բանդուրա): Ամրապնդում դիտման միջոցով, անուղղակի ամրապնդում և ինքնամրապնդում: Ես-համակարգ. ինքնակարգավորման և ինքնարդյունավետության մեխանիզմներ:

Բաժին 4. Հումանիստական հոգեբանություն: Հումանիստական հոգեբանության հիմնադրույթները: Պահանջմունքների հիերարխիա և մետապահանջմունքներ: Պատկերացում դեֆիցիտար և աճի պահանջմունքների մասին (Մասլոու): Ֆեռմենտոլոգիական դաշտ և ինքնիրացման ձգտում: Ես-կոնցեպցիա և Ես-կոնցեպցիայի զարգացում: (Ռոջերս): Լիարժեք գործող մարդու բնութագրեր: Ֆունկցիոնալ ավտոնոմիայի հասկացությունը /Օլպորտ/:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Хьелл Л., Зиглер Д., Теории личности.- СПб.: Питер, 2004.
2. Фрейджер Р., Фейдимен Д. Личность. Теории, упражнения, эксперименты. – СПб.: «Прайм-Еврознак», 2004.
3. Психология личности. Хрестоматия в 2-х томах / Под ред. Райгородского. - М.: Изд-во «БАХРАР», 2002.

1.0303/B34	2. Հոգեախտորոշում	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/ շաբ.	5. 30/30/30	
6. 4-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է՝ • ծանոթացնել ուսանողներին հոգեդիագնոստիկա գիտակարգի կարևորագույն բաժինների՝ հոգեմետրիկայի և անձի հոգեճանաչման հիմնախնդիրների հետ • փոխանցել տեսական և կիրառական գիտելիքներ հոգեդիագնոստիկական մեթոդների և մեթոդիկաների ստեղծման, զարգացման և կիրառության, ինչպես նաև ժամանակակից թեստաբանության խնդիրների վերաբերյալ, • զարգացնել ուսանողների մտավոր կարողությունները հոգեդիագնոստիկական մեթոդների և մեթոդիկաների՝ որպես հետազոտական գործիքի, ընտրության և կիրառության ուղղությամբ, հիմնվելով գիտական հավաստման օրինաչափություններին, • զարգացնել ուսանողների մոտ հոգեդիագնոստի մասնագիտական գործունեության նախադրյալները՝ գիտակցելու, հոգեդիագնոստիկական կարողությունները և հնարավորությունները ճանաչելու ունակությունը հոգեբանության տարբեր բնագավառներում:		
